

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adressé :
Rédaction du "Droschak"
A.R.A. LIBRARY
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՀԱՍԿՅԱՅԻԹԵԱՆ“ ՕՐԴԻՆ

Ը Ե Կ Օ

Հ. Յ. Դաշնակցութեան „Վրէժ“ և ենդրոնական կօմիտէն իր խորին ցաւն է յայտնում իր ընկերակից ԾԵԿՈՒ վրայ կատարւած ո ճիրի մասին։ Պաշտօնապէս յայտարարւում է, որ այդ գաղանային սպանութիւնը համարւում ո ճրագործութիւնն է ու թիւն՝ դրդւած անձնական ատելութիւնից։ ԾԵԿՈՒ յեղափոխական գործի դէմ ոչ մի յանցանք չէր գործած։

Ոճրագործները անյայտացել են։

Մեր դժբաղդ ընկերոջ յեղափոխական գործունեութեան մասին կը գրենք մօտիկ ապագայում։

Հ. Յ. Դաշնակցութեան „Վրէժ“
ԿԵՆԴՐՈՎԱԿԱՆ ԿՈՍԻՑՏ։

Եր անհաւասար է։ Մի կողմում վոքրաթիւ զօրք, միւս կողմում՝ զօրքերի ճնշող առաւելութիւն։ Սակայն թշնամու քանակական առաւելութիւնը սարսափելի չէր։ առիւծ կտրեցին հէլլէնները, հարւածին հարւած հասցրին, տարան մի շարք փայլուն յաղթութիւններ։ Բաղդը սկզբներում ժպտում էր Յունաստանին, որպէսզի, աւաղ, շուտով երես դարձնէր նրանից։ այսօր հեռագիրը յամառութեամբ միմիայն թիւրքական յաղթութիւնների մասին է գուժում։ Յունաստանի մայր հողը ոռոգւեց իր հարազատ զաւակների արիւնով։ Թշնամու զօրքերը մորեխի նման պատեցին երկրի մի մասը, գրաւեցին Թեսալիայի դաշտավայրը և բանակ հաստատեցին Լարիսայում։

Պատերազմ է իր բոլոր արհաւիրքներով։ Հրդեհը բռցավառում է, սաստկանում, մարդիք կոտորւում են ճանձերի պէս։ Մարդիկ կոտորւում են . . . ցնծացէք բաշիքովուկ դիպլօմատներ, ձեր փառաբանւած համերաշխութեան արդիւնքն է սա։ Համաձայնութիւն պոռացիք սկզբից մինչև վերջ, արևելեան ամբողջ ողբերգութեան ընթացքում, իսկ այնտեղ շարունակ հոսեց արդարների անմեղ արիւնը։ Համաձայնութիւն պոռացիք, բայց երբէք չբռնեցիք անիրաւութեան ու բռնութեան ձեռքը, երբէք չխրատեցիք արիւնուուշտ մարդասպանին։ Եւ համաձայնութիւն հոչակելով, դուք մղեցիք Յունաստանին պատերազմական փոթորիկների դաշտը ու այդ ահոելի ոճիրով պսակեցիք ձեր արիւնալից սխրագործութիւնների եղերական շարքը։ Պարծեցէք ուրեմն ձեր ժողովրդասպան համաձայնութեան պտուղներով, պարծեցէք, որ այսօր թնդանօժների մահաշունչ որոտը դղբղեցնում է աշխարհը, որ հազարաւոր մարդարարածների կարմիր արիւնով շաղախւում են լեռներն ու ձորերը, պարծեցէք ձեր այդ գաղանային յաղթանակներով։

“Յունաստանը յետ է նահանջում” — կայծակի արագութեամբ սլացաւ դէպի ամեն կողմ, խորին դաւնութիւն ու կսկիծ պատեց բոլոր ազնիւ սրտերին։ Իսկ սկահամբաւ թիւրքամոլների բանակում թնդաց դիւական քըքիջը . . . “Պապանձւեցէք լեզուներ, թիւրքիան տակաւին կանգուն է, ուժեղ, կազմ ու պատրաստ”։

Այս, կարող էք հրձել, դուք, սուլթանական բռնակալութեան ամեն կարգի երկրպագուներ։ Եւ ի՞նչպէս

ՅԱՅՆ-ՏԱԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Կատարւեց։ Չեռնոցը նետւեցաւ, և հազարաւոր լէտիօնները տարրային հոսանքի նման մղւեցին դէպի ահաւոր մենամարտութեան կրկէսը։ Կատարւեց այն, ինչ որ սպասւում էր, այն, ինչ որ վաղուց ձակատագրական էր դարձել։ Չօգնեցին Յունաստանին տասնեակ տարիների նրա խաղաղ ջանքերը, չօգնեցին նրան իր անվերջ յորդորներն ու սպառնալիքները։ Դիպլօմատիայի քար ու ապառաժ սիրտը անզգայ մնաց . . . Ի՞նչ էր մնում անել։ Մի վեհ նպատակ էր դրւած նրա առաջ արիւնակից եղերայրների սարկական շղթաները վաղուց է, օգնութիւն էին գոչում, վաղուց է Մայր-Հայրենիքը փայփայում էր նրանց վերջնական ազատութեան դաղակիարը։ Ազատել այդ ստրուկ եղերայրներին, թէկուզ լինի դա ամենաճանր զրհողութիւնների գնով . . . Այս, արդէն լցւել էր բաժակը, Յունաստանը չտատանւեց և առաջ սլացաւ երկու ախոյեանները ելան դէմ-յանդիման, մէկն իբրև արդարութեան ջատագով միւսն իբրև խաւարի ու բռնակալութեան մարմացումն, կոի-

ՀՀ թիվը. Եւրոպան իր խնամակալութեան տակ է առել Մեծ-Մարդասպանին, ձեր սիրեցեալ Սուլթան-Համբարչն։ Նա կազմակերպում է և իր կատարելագործւած հրացաններով ու թնդանօթներով կուրի դաշտ է հանում տաճկական գնդերը։ Միւս կողմից նա ջանք է թափում անանցանելի խոչընդունեք՝ դնել փոքրիկ Յունաստանի առաջ որը առանց այն էլ իր չնչին ուժերով պարտութիւն է կրում։ Տեսէ՛ք, Սալօնիկը, ուր Յունաստանը աւելի աջող պատերազմական գործողութիւններ կարող էր մղել, անմատչելի են դարձնում յունական նաւերին . . . Այս, քրքջացէ՛ք, սուլթանի խնկարկուներ, Եւրոպան այսօր բացարձակ դահճապետի դեր է ստանձնել մի փոքրիկ քրիստոնեայ ժողովրդի դիմոց, քրքջացէ՛ք. սակայն . . . դեռ ամեն բան վերջացած չէ։

Ի՞նչ էր լինի վաղը—չենք կարող գուշակել։ Ուր է տանում մազ դէպքերի ճակատագրական հոսանքը։ Աբդէօք գոռոշ, դիպլոմատիային պիտի՝ յաջողուի իր ամենակարող ՝ “Համերաշխութեան” շնորհիւ սահմանափակել պատերազմի թատրը։ Զենք հաւատում։ Թող սրաբին դիւանագէտները, թող կաշուց դուրս գան, այսուհետեւ այլեւս ոչ մի պարզամիտին չեն. կարող համոզել, որ նրանց ողբալի համերաշխութիւնը դրական արդիւնք էր տայլ։

Երբէ՛ք։ Երեկուայ փաստերը պերճախօս վկաներ են։ Այդ համերաշխութիւնը չկարողացաւ խանդարել պատերազմի ժայթքումը, նա չպիտի կարողանայ և արգելք լինել նրա տարածման։

Մեն-մենակ է այսօր Յունաստանը։ Թշնամու անհամար գնդերի դէմ մեն-մենակ կուռում է նա յուսահատաբար և կոտորում է։ Այս, բայց Հերոսական, անվեհեր դիմագրութիւնից յետոյ, փառքով ու պատռով է կոտորում . . . Կեցցէ՛ք դուք, Հայրենիքի քաջարի զաւակներ, դուք պացցուցիք, որ ձեր քաջ պապերի արժանաւոր սերունդն էք, դուք ցոյց տաեցիք, որ դիւցավնաբար կարող էք կուել ու նահատակել։ Եւ դուք կը պատերազմիք մինչև վերջին շունչը ու թող չէք տայ, որ ձեր դարաւոր ոսոխը իր պիղճ ներկայութեամբ անարգէ հէլլէնների պանծալի հողը։ Եթէ յաղթւիք էլ ձեր պարտութիւնը կը լինի յաղթութիւն. դուք կը նկնէք պատերազմի դաշտում, իբրև մարմնացած զոհ դիպլոմատական նենդաւոր դաւերի, և կը խնկարկէ ձեզ մարդկութեան լաւագոյն մասը, սերնդէ-սերունդ, անէնք յղելով ժամանակակից բոլոր զօրաւորների և յիշատակին . . .

Բայց միթէ Յունաստանը մին-մինակ պիտի մնայ պատերազմի դաշտում։ Միթէ այս կրիտիքական ըոպէին Մակեդոնիան և այլ սուլթանահպատակ ըմբոստ ազգութիւնները ձեւք-ձեւքի չպիտի տան ընդհանուր ջանքերով տապալելու ամիական վայրենի բռնապետութիւնը, միթէ նրանք կը շարունակեն լուռ հանդիսատես մնայ նաև բալկանեան պետութիւնները։ — Ահա նրանցից

մինը խօսեց բարձր ձայնով, սպառնալիքներ ուղղեց սուլթանին։ Սակայն . . . յանկարծ լոեց։ Հիւսիսից շշնջաց նրան խորհրդաւոր ձայնը. դա սպիտակ ծարն էր, դա „Հայրիկն“ էր, որ պատիրում էր Բոլգարիա-ցին հանգիստ նստել տեղը, մինչև որ իր հեղինակաւոր հրահանդները կը տայ։ Սերբիան ևս սպառնական նըշաններ է ցոյց տալիս. ժողովուրդին մէջ յուզմունք է տիրում։ Խուզ, չարագուշակ ալեկոնութեան մէջ ծըլիքում է ամբողջ Բալկանեան թերակղզին. հրաբուժը ժայթքելու վրայ է . . .

Հապա Եւրոպան—ահա մեծագոյն հարցը։ Անշուշտ կը շարունակեն ոզօրութիւնից զուրկ զօրեղ պետութիւնները” ըստ առաջնույն հոչակել, որ համերաշխութիւնը կատարելա է, կը շարունակեն և իրենց խաբել և իրար խաբել, իսկ երբ արեելքում կը ծաւալի հրդեհը և աւելի ահեղ ու սպառնալից կերպարանք կառնէ, երբ սուլթանական մեծածաւալ պետութիւնը կը յայտնուի կործանման անդունդի ծայրին, այն ժամանակ համերաշխութիւն աղաղակող պառաւ Եւրոպան ինքիններ կը նետէ արեան գոլորշների մէջ . . . “Կեցցէ՛ Եւրոպական անհամերաշխութիւնը” զիշ ձայնով կը կանչէ դիպլոմատիան և կը յարձակուի իր լէշի վրայ. կը փողփողին բազմերանգ դրօշակները սուլթանական դիակի շուրջը և . . . կը պայթի վերջապէս այն վիթխարի ընդհարումը, որին վաղուց ահ ու սառսուով սպասում է քաղաքակիրթ աշխարհը, և որի առջև մի մանկական խաղ պիտի լինի ներկայ պատերազմը։

ՆԱՍԱԿ ՊՐԼՍԻՑ

4/16 ապրիլ 97 թ.

Կոտորածի այն դժոխացին նրագիրը, որ արիւնարրութամբար իր արբանեակներով գծած և կատարեալ յաջողութեամբ իրագործած էր, դեռ իր ամբողջ գործադրութիւնը գտած չէ։ Խայտառակ և անխիղճ Եւրոպան իր հոչակառը, համաձայութեամբ կարծես իրդել է բոլորովին. խեղդել մոնկոլ բռնապետութեան տակ ճնշւած և հեծող ազգերու բողոքի և պատռաւթեան ձայնը, մէկ կողմէ իր հզօր աջակցութիւնը կը նւիրէ բռնապետին ազատութեան սիրով զօրացած բուռմը կրետացիներու դէմ, և միւս կողմէն իր վատ և թոյլատու քաղաքականութեամբ ասպարէզ տւած է անոր՝ բոլորովին ոչնչացնելու հայ ժողովուրդը, որ իր իրաւունքի և պատույ պաշտպանութեան ոճիրը գործելու յանդգնութիւնը ունեցած է։ “Սա շատ լաւ լմբրունած էր՝ թէ ի՞նչ նշանակութիւն ունեին այն առերեւոյթ սպառնալիքները, որ համաձայն Եւրոպան որոտաց իր գլխին հայկական կոտորածներու առթիւ. նա համաձայն Եւրոպայէն աւելի լաւ դիտէ նաև արդ հա-

մաճայնութեան գաղտնիքը, որուն մինչև պարզվէ՛ առիթ չի փախցներ բոլորովին տկարացնելու և անհետացնելու հայը, որ իր կայսրութեան հիմերը խախտեց և կործանման վտանգեց. իսկ մինչև այդ գաղտնիքի բացարձակ պարզվիլը այդ անհամերաշխ համաձայնութիւնը անհամաձայնութեան փոխելու խորամանկութիւնը և ինքնավստահութիւնը ունի, և ցարդ եղած փորձեր ապացոյց մ'են թէ նա յուսախաբ չի պիտի ըլլայ: Հայ ծողովուրդը, բացի յեղափոխականներէ, կը հաւատար թէ հանօթոյի և միւս պետութիւններու արտաքին գործերու ներկայացուցիչներու սպառնալից յայտարարութեանէն ետքը, որ ըրին օգոստոս 14-ի առթիւտաձիկ կառավարութեան, այլևս վերջացած է կոտորածներու շրջանը. սակայն ապշեցաւ մնաց, երբ աչքին առջև տեսաւ թօքատ և կէմէրէկ արիւնաներկ դիակներով ծածկւած: Այս, վերջին հարւածն էր խախտելու այն տկար հաւատքը, որ ունէին դեռ կարդ մը անձինք Եւրոպայի և տաձիկ կառավարութեան արժանապատութեան վրայ. այս, թուզ և նախատինք է պատրիարքի և վարչութեան երեսին, որ տակաւին բեմի վրայէն և լնկերական շրջանակներու մէջ կայսերական բարեխնամ գթութիւնը կը դրսատեն. այս, թէն տիսուր և ցաւազի, սակայն վրէժինդրութեան բոցը ևս աւելի կարծարծէ հայ յեղափոխական կուրծքերու տակ, որոնք միայն իրենց ուժերու վրայ ապաստան՝ կը քարոզին միշտ չխաբւիլ միամտարար անամօթ և շահամոլ Եւրոպայի և լիրը Համբարի ստապատիր խոստումներէն այս, միանգամ ընդ միշտ կապացուցանէ: թէ հաշտութիւնն անկարելի է հային ու տաճիկ կառավարութեան մէջ և թէ ամեն հայ, աղքատ թէ հարուստ, աշխարհական՝ թէ կրօնաւոր, պարտաւորւած են կամայ թէ ակամայ ցմահ ոգորիլ ժողովրդի ազատութեան իրաւոնքին պաշտպանութեան համար:

* *

Այս օրերս ամեն մարդ թոքատի կոտորածով զբաղածէ: Մանրամասնութիւններ կը ցուցնեն՝ թէ հոն ալնոյն մէթոտը և նոյն անգիտութիւնը գործադրւած է: Տաճիկ խուժանը զինւած կացիններով, տապարներով և սուրերով յարձակած է անդէն ժողովրդեան վրայ, որ նախապէս գիտակ շատերը պահւելու զգուշութիւնը ձեռք առած էին: Հանդիպած հայը կը կոտորեն, քառսուն-Մանուկ եկեղեցին կը մտնեն, զարդերը կը կողովահն, սեղանը կը պղծեն և քահանան՝ Տէր-Յովհաննէսը, կսպաննեն հոն գտնւողներուն հետ: Կոտորածը կը տեէ երկու ժամ, և այդ սուզ ժամանակին մէջ միայն քաղաքէն 130 հայ կսպանւին և 30 ալ կը վիրաւորին: Ապա կսկսի աւարառութիւնը, 265 տուն և խանութ կը կողոպատւին: Կուսակալը կը հասնի Սերաստիայէն և խովզութիւններու վերջ կուտայ: Կոտորածը կը տարածւի և գիւղերը, ուր սպանւածներու թիւը

3-400-ի կը հասնի: Թոքատէն 4 ժամ հեռի Պէջէրի գիւղի քով գտնւող Ս Յովհան-Ռոկեբերան վանքը կը կոխեն, կը Թալլեն և Մանուէլ ու Մարտիրոս վարդապետները 15 ուրիշ հայերու հետ կսպաննեն: Հոն կը հասնի վերջապէս Պոլսէն կազմւած արդարադատ յանձնաժողովը, որ կսկսի ցոյց կազմակերպողները և պարագլուխները բռնել և բանտարկել. յայտարարութիւններ կը ցըւէ, որպէսզի վնասողները իրեն դիմեն, իրարու հետ սիրով վարւին, խանութները բանան, գիշերները դուրս չեն և այլն և այլն: Տաճիկ խուժանը ապստամբական ցոյցեր կը նէ, որպէսզի ձերբակալութիւններու շրջանակը չընդլայնի: Տաճիկ յանձնաժողովին գործակից են նաև Սամսոնի Ռուսական և Սեբաստիոյ Ագիլական հիւպատունները: Հոն է նաև Սեբաստիոյ առաջնորդ Պետրոս եպիսկոպոսը:

Կոտորածի լուրը պատրիարքը իմացածին՝ պէս անմիջապէս կառավարութեան կիմացնէ և կը ննդրէ, որ յանցաւորները պատժւին: Դեսպանները հաւաքապէս սուլթանին կը դիմեն, որ այս անգամ աղուեսալին դէմքով, խոնարհ նայւածքով իր ցաւը և գուգոհութիւնը կը յայտնէ եղածին վրայ և անմիջապէս երկու մարդ կը նորէ իրողութիւնը քննել տալու համար: Դեսպանները կը հակառակեն, սուլթանը կը համաչերպի անոնց պահանջին և ահա լիազօր յանձնաժողով մը կը կազմւի բարձրագոյն իրատէով, գայմագամ, ուստիկանապետ և ուրիշներ պաշտօնանկ կը լլաւ, թերեւս անոր համար, որ լաւ կազմակերպած չէին գործը և ամրող թոքատի հայ ազգաբնակութիւնը հրոյ և սրոյ ճարակ ընելու յաջողած չէին, հակառակ այնչափ փորձառութիւններուն: Այսչափ միայն ալ ի՞նչ կուզէք. պիտի երթան, պիտի քննեն, պիտի պատժեն, և այս գոհացում մ'է պատրիարքին, որ սուլթան Համբարի երկրպագուն և կամաց-կամաց հլու գործիքը ըլլալու բաղդն ու երջանկութիւնը ունի:

Պատրիարքի յաջող քաղաքականութեան արդիւնքներէն մին է նաև 5 բանտարկեալներու արձակումը, որ ճարտարութեամբ յաջողեցաւ ձեռք բերել թոքատի ահագին: Կոտորածի շնորհիւ: Ասոնք ընդհանուր ներումի մնացածներէն մի մասն են, երկու մարզւանցիներ, Աշգաբեանի տէրրօրիստը, անոր ընկերը և ուրիշ մը: Ուրիշներ դեռ կը մնան, սակայն անոնք ալ պիտի ազատ-ին անշուշտ, միայն ուրիշ կոտորածէ մը վերջը, թերեւս թուոսթոյի կոտորածէն: Որովհետև անցեալ օրեր բաւականի չափ սուբայններ, համանման և համաչափ, կոտորածի անհրաժեշտ գործիքներ, գտնւած են տեղացի տաճիկներու քով, և թէ շրջակայ գիւղերու գաղթական ու տեղացի թիւրքերու խլրտումներն ու շարժումներն հիւպատուններու կողմէ կանխաւ իմացւած և առջել առնւած է, ակամայ անպատճառ:

Հետապնդումներու և ձերբակալութիւններու շրջանակը երթալով կը սեղմւի: Արեւական խնդիրը տաճիկ-

ՆԵՐԸ ԿԸ յուզէ, զսպւած ատելութիւնը բացարձակ կը
ժայթքէ անոնց աչքերէն:

Տնտեսական տագնապը ծայրայեղութեան կը դիմէ,
առուտուր չկայ, ապահովութիւն չկայ, վերջը . . .
Վերջը յեղափոխականը դիտէ . . .

ԵԱՄԱԿ ՔԱՐԴԱՐՄԻՑ

23/7 փետրվար 97 թ.

Այս որեր Տրապիզոնէն հասած ճանապարհորդներէ
կը քաղենք հետևեալ տեղեկութիւնները:

Կրետական վերջին դէպքերը տեղւոյն թիւրք բնակչաց մէջ արդէն բաւական յուզում յառաջ բերած ըլլալով, այդ յուզումը աւելի կը սաստկանայ, երբ Պոլսէն կը հեռագրւի րէտիֆ զօրքերը հաւաքելու հրամանը. մէջ զանքով կսկսին ժողվել րէտիֆները և քիչ ժամանակի մէջ կը յաջողին զինորներու մէջ մասը զէնքի տակ դնել: Դրամ ունեցողներէն շատերը փոխանորդ կը վարձեն 30-40 ոսկիի փոխարինութեամբ. առհասարակ շատ մէջ դժգոհութիւն ցոյց կուտան և սաստիկ կը զայրանան յոյներու դէմ, որոնք պատճառ կը նկատեն իրենց կրած բոլոր վեաներուն: Խեղճ, արգէտ ժողովուրդ, որ չգիտնալով չարիքին միակ աղբիւրը, իր զգացած բոլոր զայրոյթն ու ոխը կուզէ անմեղներու վրայ թափել:

Ամեն ժամանակ և ամեն բանի մէջ, ամենէն աւելի
ճնշւած ու հարստահարւած գիւղացին այժմ նոր զըր-
կանքի մ'ալ կենթարկւի. անխիղճ կառավարութիւնը
առանց ազգի խորութեան իրենց ձեռքէն կառնէ իրենց
ապրուստի միակ միջոցը եղող ձին և այն ալ ինչ մէջ
անիրաւութեամբ, հազար զուրուշ արժէք ունեցող ձի-
ուն, չորս հարիւր զուրուշ արժէք դնելով՝ տիրոջը կու-
տայ թղթի կտոր մը կառավարութենէն գանձելի, սա-
կայն ե՞րբ, այդ միմիայն Ալլահը գիտէ և կամ մարդա-
րէին փոխանորդ՝ դարուս ամենանշանաւոր զասապ. Հա-
միւր: Երբ գիւղացին սաստիկ յուզւելով կառավարու-
թեան ըրած այս անիրաւութեան գէմ, սկսի բողոքել,
պնդելով՝ թէ իր ձին հազար զուրուշն գնած է և չը
կրնար 400 զուրուշի տալ, ով կը լսէ իր արդար բո-
ղոքը, իրեն կը պատասխանէն. „Երբ ձին պատերազմէն
ողջ վերադառնայ, դարձեալ 400 զուրուշով քեզ կը
ծախենք և այսպէսով զրկանք մ'ալ չոլլար“: Ի՞նչ հի-
անալի տրամաբանութիւն և սուլթանական արդարու-
թիւն:

Տրապիզոնի մօտ Բլաթանացի հայ գիւղացիներուն
ձիերն ալ նւէր կը պահանջէ կառավարութիւնը. ի՞նչ
սոսկալի անամօթութիւն, սպաննել կողոպտել և ձիերն
ալ նւէր պահանջել:

Բաիւրբ աղքատ ընտանիքի մը երկու որդիները զին-
ւորութեան կոչւելով, մնացեալներուն ապրուստին հա-
մար իրենց ձին կը յանձնեն բարեկամի մը, որպէսզի
գործածելով՝ ստացւած շահէն շաբաթէ-շաբաթ մաս
մը տայ անոնց, որով միայն անօթութենէ կազատէին.
բայց անագորոյն կառավարութիւնը առանց այլնայլու-

Բեան զայն ալ կը յափշտակէ:

Բող լսեն թիւքը յեղափոխականները և տեսնեն՝
թէ իրենց թիւլիք նղբայրները ի՞նչպէս կը տառապին
անգութ գազանի մը ճիրաններուն մէջ, թէև դեռ ա-
նոնց կրած բոլոր տառապանքները, մերիններուն քով
ոչինչ. Են: Յունական մենաստանի մը Չորիններն ալ ու-
զեցին, վանահայրը հատ մը նւիրելով ազատեցաւ առ
այժմ, բայց տեսնենք վերջը:

Այն գիշերը, երբ բէտիֆները ժողովելու հրամանը կը հեռագրւի, նոյն առաւօտը փողոցները թափւած կը գտնւին ահագին թւով թիւրք յեղափոխական թերթեր, „Միզան“, և յայտարարութիւններ արիւնագոյն թանաքով գրւած ու կնքւած։ Այս ամենը թէ՛ քաղաքը և թէ՛ գիւղերը այնքան ճարպիկութեամբ և այնքան մեծ քանակութեամբ կը ցրւին, որ բոլորին զարմանք կը պատճառէ։ Մինչև իսկ մզկիթներու մէջէն կը գտնւին և կարծես թէ բէտիֆները ժողովելու հրամանին կսպասէին։ Թիւրք յեղափոխականները իրենց այս բոլոր թերթերով ու յայտարարութիւններով թէն անմիջական արդիւնք չեն ունենար, այսինքն ժողովուրդը ուշքի գալով զինւորագրութիւնը մերժելու չափ քաջութիւն չունենար, սակայն բոլորովին՝ ապարդիւն ալ չանցնիր, դժգոհութեան լոին բողոքներու աճելուն կը նպաստեն և տակաւին այդ թերթերուն անուններն իսկ չլսողներ զանոնք աչքովնին կը տեսնեն, կը կարդան և անշշուկ իրաւունք կուտան գրւածներուն։ Գիւղերու մէջ այդ թերթերու երեալուն առթիւ հետաքրքիր և ծիծաղաշարժ բաներ կը պատմւին. գիւղի մը մէջ 1-200 հոգւոյ չափ, քանի մ'անգամ կը հաւաքւին մզկիթին բակը, կը խորհին՝ թէ ի՞նչ կը նշանակէ այս թերթերուն երեիլը և չկրնալով երբէք բացատրութիւն մը տալ ատոր, նախախնամութեան մատը կը նկատեն անոր մէջ և կըսեն՝ թէ Մոսկովը իրենց երկիրը պիտի գրաւէ, անոր համար Ալլահը կանխաւ այդ թղթերը թափել տւաւ, որպէսզի իրենց գիւտցընէ գալիք պատուհասը. իսկ ուրիշներ կըսեն թէ այդ թղթերու մէջ տինամիթ կայ, որ անշուշտ մզկիթը օդը հանելու համար է և այս մտածումը այնքան կը սարսափեցնէ զիրենք, որ նոյն իսկ իրենց բամազանի նւիրական օրերուն կստիպւին մզկիթը գոցել որպէսզի չլլայ թէ զիրենք ալ մզկիթին հետ օդը թոցնեն։ Կը պատմեն նաև՝ թէ գիւղացիներէն շատերը զինւած կը շրջին գիւղին մէջ առանց գիտնալու՝ թէ ինչո՞ւ, և եթէ ազդեցիկ մէկը որ և է հրաման մը ընէր, պիտի գործադրէին առանց խորհելու՝ թէ ինչ կըսեն, եթէ իրենց ըսէին՝ „Զարդեցէք քրիստոնեաները“, պիտի զարդէին; և կամ նոյնիսկ հրամայէին թէ „քանդեցէք կառավարութիւնը“ դարձեալ պիտի ընէին. տգէ՛տ ժողովուրդ, որ վտանգի ժամանակ ոչխարի նման մոլորելով, չկրնար երբէք կշռել իր ըրած գործին լաւ կամ վատ ըլլալը և միայն կուրօրէն կը հետևի իր առաջնորդներուն։ Թէ քաղաքը և թէ գիւղը մօլաներէն ոմանք կը հասկնան թիւրք յեղափոխականաց միտքը և մի քանին մինչև իսկ առանց վախնալու մզկիթին մէջ կը խօսին ընդդէմ կառավարութեան և զեղծում գործող պատօնեանեսուն։

ՆԱՄԱԿ ԾԱԳԻՆ-ԳԱՐԱՅԻՍԱՐԻՑ

2/14 ապրիլ 97 թ.

Չապին-Գարահիսարի վիճակը շատ երկիւզալի է. կառավարական ձեակերպութիւնները կուզեն կլեցնել ժողովրդին՝ թէ ապահովութիւնը կատարեալ է. միւս կողմէ թիւրք խուժանի սպառնական ու զինեալ երեւյթը մեզ ահուղողի մէջ կը պահէ: Քանի մ'օր առաջ բացեիրաց կը պուային՝ այս անգամ յոյներն ալ մէկտեղ պիտի ջարդենք»:

Փետրւար 24-ին քրիստոնէից վրայ յարձակելու մտադիր էին, բայց անյայտ պատճառներով ետ կեցան: Այս թիւրք ժողովուրդը մազի չափ մտածում, տրամաբանութիւն չունի, ոչ երկրին պահանջը գիտէ, ոչ օգուտը, կոյր անսիրտ գործիք մ'է, մոլեռանդ սրիկաներու և մօլաներու ձեռքը: Գատէր կը կըսէ, ու առաջ կը վազէ . . .

Թոքաթի աարսափելի կոտորածի լուրին հետ հոս հասաւ նաև տեղւոյն միւթէսարիֆին պաշտօնանկութիւնը, և չարագործներու դատապարտութեան երկիւզը . . . ատոր վրայ տեղիս կատղած խուժանը հանդարտեցաւ. քիչ մը. կառավարութիւնն ալ իր կողմէն մունիտիկներ հանեց, յայտարարելով՝ թէ ժողովուրդները իրարու չմասնեն, հակառակ պարագային խստիւ պիտի պատժւին: Բայց հայ ժողովուրդին գլուխը այնքան քարին դպած է, որ կառավարութեան և անոր պաշտօնեաներուն փաղաքշիկ խօսքերուն վրայ հիւլէի չափ հաւատք չունի. մանաւանդ որ այստեղի կառավարիչը կարծես սուլթանի փորէն ելած է, իսկ մեր առաջնորդական տեղապահն ալ Աշբեանի. քանի մ'անգամ եղաւ միւթասէրիֆին թելադրութիւնով շնորհակալութեան ուղերձ կը մատուցանէ՝ թէ վալիին և թէ միւթասէրիֆին իրեն: Այս անգամ միւթասէրիֆն պաշտօնագիր (թագրիր) մը ստացաւ, որուն մէջ վստահութիւն կար, թէ այլևս ու է դէպք չի պատահիր, և եթէ տեսնեն տաճիկներ, որ գրգումի տեղի կուտան իսկոյն իրեն իմացնեն ևայլն: Դործին աւելի զաւեշտական կերպարան մը տալու համար, միւթասէրիֆը իր թագրիրին հետ բարեհաճած էր զրկել նաև բարեմիտ առաջնորդին տալիք պատասխանն ալ, որուն մէջ կըսէր ուտեղս երբէք դէտք չէ պատահած, հայ ժողովուրդը շնորհիւ տեղիս կառավարութեան, հանդիստ կերպով իր գործերը կը շարունակէ, ժողովրդին մէջ երբէք թշնամանք, կամ ատելութիւն չկայ եալ և այլն»: Իսկ մորով ու մարմնով մեր ծերունազարդ Ամբոսիոսը անխղճօրէն կատարեց չարասիրտ կառավարիչին հրամանը . . .

Օրմանեանի սուլթանը գովաբանող կոնդակը կարդացւեցաւ: Հաւատարմահրաւէր յորդորանքներով: Պաշտօնագրով մը առաջնորդին արտօնւեցաւ միշտ ներկայ գլուխութիւնը ներկայ ժամանակի ժամանակական հայսերական հայրական անդին գերմանից, Աւստրիյ կայսրեց, տակերնին նախթ քածի պէս ներկայ գլուխութիւնը վիեննա, Վիեննաէն նեթըն պուրկ կը վագն: անշուշտ որոշելու համար, թէ ի՞նչպէս կարող նու խալիքայի գլուխութիւնը պահպաննել թիւրքիս ամբողջութեան չփառաշխել . . . այլ խառնակիչ պատիկ ազգերուն դաս մը տալ . . .

Կ Ա Ր Ի Ն

Այստեղի համար տարածւած լուրը ջարդի մասին սուտ էր. սակայն ձերբակալւել են 1 հայ և մի քանի թիւրք զինուրականներ՝ իբր ներիտասարդ Թիւրքիոյ « պատկանողներ: Ասոնց մէկը կրթական տեսուչն է, որը առնաւուտ մըն է:

Դրանից յետոյ Ալայ-բէյը յանկարծակի խուզարկեց բանտը, ուր գտան յեղափոխական նամակներ, թերթեր (հայ և թիւրք), բրոշիւրներ և այլն. ձերբակալութիւնը վերսկսան: Բանտարկեալները կը գտնւին տանջարաններուն մէջ ու խիստ կը չարչաբախին, որպէսզի նշմարտութիւնը խոստովանին: Իսկ ամբողջ ոստիկանութիւնը տենդուտ գործունէութեան մէջ է. լրտեսներութիւրը բազմապատկւած է. բոլոր նկասկածելին « անձնաւորութիւնիք խիստ հսկողութեան տակ առնեած են:

ԹԻՒՐՖԻԱՅ ԸՆԻՐՁԵ

Օր մը էշը, կապիկը, այծը եւ արջը կը մտածնն երաժշուական քայլանում մը կազմել . . . միշտ այդ ծրագրով կազմւած է ներուպական համաձայնութիւնն ալ, որուն նպատակն է ներուպական վեցեակ պատականին միշեւ անհամաձայնութիւնը միշտ վառ պատել:

Այդ վեց գարշելները եթէ պուտ մը մարդկային զգացում չունեցան, իրարու մէջ ալ պատւանաւութիւնն չունին: գալունածուկ կերպով կաշխատեն՝ թէ ինչպէս կրնան իրաք զլորել:

Թէեւ այդ տէրութիւնները իրենց երկրներուն մէջ, բարաքակիրթու բարոյական ազգեր կը հոչակեն զիրենք, բայց երբ իրենց հորիզոննէն դուրս կելլեն, անքարոյականութեան սկզբունքով կը շարժին: Կրետէն հաղացնելու պատրւակով 80 զրահաւոր դրկեցին ու քաշաբար դէմ դրին . . . 000 ապատամբներու. եւ վերջապէս թող շուտին, որ այդ գարատանչ կրաքեցները իրենց ազատութիւնը ձեռք ծգեն: Իսկ այսօր, երբ Յունատանը Թիւրքիոյ դէմ անհաւասր կը ու միշէ հերոսաբար, այդ վեց լէշի ետեւէ վազող ագուաները. հակառակ միջազգային եւ պատերազմական իրաւունքներու, որեւէն դեռ պաշարած եւ վասօս զնդապետը փակած են զրահաւորներու վանդակի մը մէջ, որովհետեւ Կրետէի առջեւ խոնածած այդ շարաշուրք համաձայնութիւնը, չարագուշակ նշաններ կամփուիէ իս մէջ:

Ինչ ալ ըլլայ կեղծ համաձայնութեան մը խաքուսիկ երեւոյթը, արեւելեան հարցին ամենէն հասուն ժամանակն է, կամ պէտք է քաղել կամ պէտք է ծգել որ որդնուտի:

Յունա-թրքական կոփով կակսի արեւելսան քազմաշարչար. հարաւեղ ներկայացումը: Իրաւ է, տէրութիւնները և ա ո ա ո ւ թ ն ա ն անունով կը գոռան, բայց կարելի է ըսել առ վ ի ս տ պ ա լ ու թ ի ւ ն ը: Անունովը ինչե՛ր կը սարքին արդեօք մութին մէջ:

Տածկաստան, համակերպելով գա տ է օ ի ն, պիտի զանէ վերջապէս իրեն համար երկասյրի դաշոյն մ'է:

Երբ Թեսաւիոյ մէջ երաց վիճակը վրդովիչ գոյն մը կառնէ եւ դաւականի միւս պետութիւններն ալ կը տեսնան Տածկաստանի ողիս կողոպուտին, անդին Գերմանիոյ, Աւստրիյ կայսրեց, տակերնին նախթ քածի պէս ներկայ գլուխութիւնը վիեննա, Վիեննաէն նեթըն պուրկ կը վագն: անշուշտ որոշելու համար, թէ ի՞նչպէս կարող նու խալիքայի գլուխութիւնը պահպաննել թիւրքիս ամբողջութեան չփառաշխել . . . այլ խառնակիչ պատիկ ազգերուն դաս մը տալ . . .

Սուլթանը ինք բուռն բախտն արթուն:

Եւ սակայն . . . պիտի ոչնչանայ:

* *

Պետութիւններ կան, ինչպէս մարդիկ, ուրո՞ք հազարութէլ ձիւնու
փորձանքներէ յետոյ, դեռ խելքերնին գլուխինին չեն քերեր ու կար-
ծես թէ անողոք ճակատազրականութիւն ուր ուրոք բոլոք եւ ապա-
ռաժուո ճականներէ դէալի անդունդ կառաջնորդէ. զիրենք: Եյսպէս
են: Սպանիա ու Թիւրքիա:

Այդ դժոխային երկիրները եղբ պատվութեան անողոք կոռվինելուն տակ ջալդուիշուր ըլլան, զազանութիւններու յիշատակ մը կը միայն ծգեն իրենցմէ:

Կար ժամանակ, ոչ Օսմանիան կիսալուսինը աւելի կը լուսաւորէք հողագնեխն վրայ, որքան չէք լուսաւորէն երկնից վալուսինը: Կար ժամանակ մը, երբ ալլահի սուլեյմանիրը կը փառասիրէին չումի ս. Պետրոսի տաճարին խորանին վրայ իրենց ծիուն խոտ կերցնելու նկրութան ահուզողի մէջ կը պահել: Որքա՞ն փոխւած են այդ հինգ արքի օրենքը, ամեն քան առաջ զնաց, միայն Թիւլքը իր տեղը քարի պէս զամանած մնաց, ու իր անշարժութեան մէջ հոգով մարմսով ապակնանեցաւ ու իր մթնոլորտին մէջ ապրող ժողովուրդներուն համար պատիժ ու պատուհաս եղաւ:

Եկած է ժամանակը, ուր այլ թշրի ժողովուրդները գիտակից իրենց լենսական ուժին եւ առաջդիմական մղումին կընդվահն հակամարդկային վարչութեան մը դէմ, ալլահի ստենքը ալ չը սարսափեցներ զիրենք եւ եթէ ժամանակով սարսափահար ակնածանքով մը կը յիշէին սուլթաններու անունը այսօր կը սիրեն շան անունը յիշել ու չամիտի անունը քերան չառնել:

Քնչեցէք Թիւրքիան եւ վերակազմեցէք նոր Թիւրքիա մը, վարչական ամեն կատարելագործումներով:--Առաջին օրէն պիտի սկսի ետոնիկ շարժումը: Այդ ժողովուրութ այն ասին առաջ կը քալէ, եթք հարկ է կործանել ու քարուքանդ ընել . . . կարծն Թրքաստանի չոր անապատներուն կարօտը կը քաշէ, առոր համար եթք չի գլուներ աւագ, մոխիրի վրայէ կը քալէ . . .

Ասուղղայ երկիր է Թիւրքիան. որպէսզի իր բարբարու ու մոլեռնանդ բնագլները ուժաթափ ըլլան, ալէտք է նախ հպատակնեւ քաղաքակիրթ ազգի մը լուծին տաեւ, կառավարելէ առաջ կառավարւիլ սորվեցնել անոր. ապա թէ ոչ ոշմարիտ մարդասիրութեան վերջին իսկը սլդտի ըլլայ սա արդարավճիռը „ալէտք է կործանել Թիւրքիան“:

Բայց այդ ծշմարիտ մարդասիրական դարը դեռ շատ հեռու է. լիսում կերպեր ու անօնական՝ կեղոսու շահեր կը զոհեն ամեն ազ-նիւ եւ պարկենցու սկզբունք: Եթէ որամստէրներու շահուն եւ կամ կայսրներու քմահանոյնին համար վայրենական դրութիւնը նախ-ընտրելի է, կը տապալեն առերեւոյթ քաղաքակրթութիւնն ալ, եւ լնկերային առաջադիմութեան առջիւ հրետանիներու պատնէշ մը կը բարձրացնեն... .

Եթէ Սուլթան-Համիտ գոյութիւն չունենար, ալէոք էր համ: Ալ ստեղծել անկէ, դարավերջիկ մարդկութեան ստոր նկարագիրը ի վեր հանելու համար: Մեծ-Մարդասպանը իր գաղանութիւննիրով ծառայութիւն մ'օրաւ. քաղաքականութեան կեղծ դիմակը վար առաւ, իւ մեզի ցոյց տւառ այդ դիմակին տակ կոնճած ու ահոելի դէմք մը, որուն իւրաքանչիւր փոթիկները մթին անցեալի մը արտայայտութիւնը ունին:

Սուլթանը մինակ ոչինչ ըրաւ. իրեն զօրավիճ ուներ քո իստուագործ վեհապեսներ: Տեսանը թէ ինչպէս իմաստասէր երկու մը կայսրը, չխպնելով քացարձակօրէն պաշտպանեց այն մարդը, որ առուջին անգամ ըպալով ընդհանուր մարդկութեան կողմէ Մէծ-Ղարդաս ապահով կարժանանայ: Եօթ ընդունինք թէ հասարակութեան մէջ գոեհիկ տիսենը կան; ինչո՞ւ ընդունինք՝ թէ այդ գոեհիկութիւնը ոսկեզօծ առաստաղներու տակ աւ կընան առաջ գալ եւ աւելի նողկալի հանգամանքներով: Սա մինիթարական է, որ սիյօմը չամփակ տեղը չէ եղած, եթէ պահ մը հաւատանք հոգեւիռ-իութեան, պիտի համարձակինք ըսել, թէ այդ մարդը Հէնկիթիմուրի հոգեւիռիւածն է:

Թիւրքիան կը կոլճանի. արեւելիան հրաշէլ հարցը սկիոնի հալեց-
նէ այլ երկերը, որ արիւնի եւ անէծքներու զանգւած մ'է: Կիյոմի մե-
ժիստօֆէլական ջանրերը ուրիշ նպատակ չունին: այլ տաճկակաս-
տանը իր հոգին ըս փշած, անոր թանկագին սոսարկաննը իւրացնել-
իր կնկանը կուրծքը, քիթը, քերանը զարդարելու համար: Ռուսիոյ

կայսրը ու Փքանսիական նախարարութիւնները քառական կրծուք հանեցին, առևլթաններու ոչիզած միջավարթամ' առարներէն:

Մէկ բան մը մսաց: Համուտը չմիութ եւրոպական թագուհիները
Պոլիս երթալու և իրենց երախտազիտական տոչորով զգացումները
անծամք յայտնելու են. Մեծ-Խալիֆային. իրենց երիկներուն . . .
մէյլէկ պատիկ խալիֆաներ հասցնելու համար.

Ինչպէս ամեն. դաք ունեցած է իլլ յատկանիշը, այս դարսուն յատկանիշն եղած է վատութիւնը:

Այս տէրութիւնները, որոնք Պերլինի դաշնագրով Թիւքրիոյ քրիս-

տոնեանինը ուն ազատպահութիւնը ստանձնած են, ոչ միայն չեն կա-
տարեր իրենց խոստումը, այլև կը քաջալերեն թշնամին, Մբու-
թեան լրումն է ասիկա: Երբ չայաստան արեան ջրհեղեղ կար, Սա-
լզակի սառ սրտով մը կը սէր՝ „ի՞նչ ընենք, մեր նաւերը Տօդոսը չեն
կրնար բարձրանալ“: Իսկ երբ Կրետէն կը կոտորէին, Սօլզակին ի՞նչ
կը մտածէր: Անպատճառ կը ցանկար, որ իրենց նաւերը հթայի վը-
րայ բարձրանային . . . Բայց ի՞նչ ըսես. Լեզուն ուկոր չունի, ուզած
կողմէ կը դառնայ, մանաւանդ երբ ոյդ լեզուն Սօլզակիի բերնին
մէջ կը թաւալի: Անգլիական նաւերը. Կրետէն սմբակոծեցին, չա-
յաստանն ալ այդպէս պիտի ընէին անշուշտ, աղէկ որ ներսերն ենք
եղել:

Եւրոպական դահլիճներոդ իրենց կատակերգութիւնը լաւ խաղան:

Թոքաթի անակնկալ կոտորածը վերջապէս եկաւ եւ նրեւան հա-
նեց Եւրոպական դիւանագիտութեան ահռելի դաւադրութիւնը: Զես
գիտեր թէ այդ կայսր կոչւած ոհւաղները ի՞նչ շան ծնունդ են, որ
այդքան անխղճօրէն կը վարւին անտէր ժողովուրուներու զոյութեան
հետ: Թոքաթի մէջ 700 հոգի կոտորել տւաւ մոնկոլներու սուլթանը
Եւ Եւրոպան ծայն չի հանեց. քաւականացաւ քննութիւն մը քանա-
լով: Սուլթանը իր արհեստին մէջ լինցուցած, վաւին եւ մէկ քանի
պաշտօնեաներ պաշտօնանկ ըրաւ, ցուցնելու համար՝ թէ հակառակ
է կոտորածի: Ասիկաւ կոտորածի նոր մէթոդն է, կոտորել տալ ու յե-
տոյ ցաւ յայտնելով, քանի մը հոգի ձերբակալեն և ատկէց դիւրին
քա՞ն կայ: Դեսպանները սպառնացնը են, որ եթէ կրկին կոտորած,
պատահի, վալիներուն ըլուխը պիտի պահանջեն: Թէ եւ սուլթանը
այդ սպառնալիքները շան տեղ աւ չի դներ:

Այս առաջին կամ տասներորդ անգամը չէ: Եթզ մէկը սննիրա-
ւաբար եւ կանխամուածութիւնով ոճիք մը գործած է, ինչո՞ւ մահ-
ւան չի դատապարտվի: Եթզ չորս հայնք կալսաղան քարձրացան
սրբազն իրաւունք մը պաշտպանած ըլլալու համար, ի՞նչ իրաւուն-
քով այդ վճիռը պիտի չգործադրւի անոնց նկատմամբ, որոնք ոճրա-
գործութիւնը արհեստ ըրած են: Եւ մարդկային ո՞ր օրէնքով կը պա-
հուի այնակի սուլթան մը, որ եթէ հասարակ անհատ մ'ըլլար մին-
չեւ հիմա 100 անգամ՝ մահւան դատապարտած կը լսար: Մի՞թէ զա-
գի վրայ ըլլալը լիազօրութիւն կուտայ մարդուս հրէշ մ'ըլլալու եւ
անպատիժ մսալու:

Հայութեան անծնուրաց զաւակներուն կը մսայ իրենց ազգին այս
գերազոյն ծզնաժամին թոյլ չտալ, որ մեր անիւնկալ թշնամին նոր
դաւեր լարէ. շարժէ, հայ երիտասարդ, քու ահարելու այլ ազնիւ վրէժ-
խնդրութենէդ աւելի կը սուկայ չամուռը, բան Յունական քաղի-
քարներէն: Տամիկ կառավարութեան խելքը հասած է թէ հայու-
թեան ծենքէն ծողոպելիք չունի: Եթէ շատերուն համար անցած է
հերոսութեան դարը, միզի համար նոր կակսի: Հրացանի մը ծայնը
աւելի կը սարսեցնէ չամիսիր զահը, բան եւրոպական տէրութիւննի-
րուն զոհնչները: Եթէ չպիտի ապրինք իբրեւ մարդ, պէտք է միոնինը
իորդի մարդ:

Uphill with Surya dinnuji

Մեզ այսպիս է գարնան գալ

Մեզ համար չէ քրիստոնյարեալ

Մեզ համար միայն սուլբու ու զէնքը

Մենք մինչեւ այժմ գեռ ոչ մի խօսք չենք ասել մի հարցի
մասին, որ երկար ժամանակ խօսակցութեան առարկայ է

դարձել զիստաւորապէս արտասահմանի հայերի մէջ։ Սուստ էինք, որ այդ հարցը պարզէի, „Դաշնակցութիւնը“ իր վեր չն ա կ ա ն որոշումը կայացնի եւ ապա մենք ասէինք մեր վերջին խօսքը։ Այդ հարցը միութեան կամ համերաշխ գործունէութեան մասին եղած բանակցութիւններն են, որ սկսել էին „վերակազմնալ“ Հնչակեան կուսակցութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան մէջ։

Իրաքանչիւր մի անհատ, որ քչից-շատից տեղեկութիւն ունի յեղափոխական գործունէութեան մասին, գիտէ, թէ ինչ աստիճան զգուշութիւն եւ շրջահայեցութիւն է պահանջում ամեն մի քայլափոխում։ Արդ, հայ հասարակութիւնը, որ հետաքրքրում է յեղափոխական կուսակցութիւնների միութեան կամ համերաշխ գործունէութեան խնդրով, պէտք է հասկանար ինսդրի փափկութիւնը, ուստի եւ մեր „լռութեան“ բնական պատճառները. պէտք է հասկանար, որ այս տեսակ դէպքերում բաւական չէ միայն արտայայտել պլատօնական ցանկութիւններ, այլ անհրաժեշտ է ուսումնասիրել այն մարմինը, որի հետ միասին ձեռքբանութեած պէտք է տանել Հայրենիքի ազատութեան ծանր ու պատասխանատու աշխատանքը եւ զանել գործնական, նպատակայարմար ճանապարհներ՝ միացնելու ի սկա կ ա ն յեղափոխական ուժերը։

Կրիստոմ ենք, հասարակութիւնը պէտք է խորհուրդ տայ մեզ զգոյշ վերաբերումն դէմի ամեն մի անհատ, որ ասպարուէզի վրայ է յեղափոխական անւտն տակ. պէտք է աջակցի մեզ՝ հեռացնելու այն խոչընդուները, որոնք արգելք են հանդիսանում բուն գործիչ ուժերի համախմբման եւ ոչ թէ պահանջի մեզանից գեղեցիկ խօսքեր, հմայիչ խսառումներ, փքուն ճառեր, որոնք սազում են բեմախօսներին եւ ոչ կուի գաշտում գտնուող զինւորներին։

Դժբաղդաբար այդպէս չէ։

Մեր լռութիւնը զանազան տեսակ մեկնութիւնների նիւթէ դարձել։ Բայց, հասարակութեան մի մասը, որ հեռու է պահել իրեն յեղափոխական շարժման մէջ ջերմ մանակցութիւն ունենալուց եւ որը այժմ եւս նեղութիւն չի կրում աւելի մօտենալու եւ գործի ընթացքի մասին քիչ թէ շատ ճիշտ գաղափար կազմուու, բնականաբար ամենաբարդ հարցերը վճռում է ամենադիւրին կերպով եւ անտեղի դիմումներով զուր աղմուկ յարուցանում։ միւս մասը իր գիւղահաւատութեան շնորհիւ կոյր գործիք է զառնում բախտախնդիրների ձեռքին եւ իր բարի, անկեղծ ցանկութիւնները ծառայեցնում պղասոր ջրերում ձուկ որացողների գծում շահերին։

Յայտնելով հասարակութեան, որ „Դաշնակցութեան“ պատասխանը հնչակեան „վերակազմնալ“ վարչութեան դեռ եւս վերջնականապէս չի ձեւակերպած, մենք հասարակութեան անհամբեր ճայներին բաւականութիւն տալու համար՝ հետեւեալ անգամ կը պարզենք մեր ուշ պատասխաններու սրատճառները։ Բայց մեր բոնած դիրքը լաւ պարզելու համար, մեզ անհրաժեշտ կը լինի խօսել „Հնչակեան կուսակցութեան“ մէջ ծագած բաժանումների փոխարձ մերկացումների մասին, մի բան, որից մենք խոյս ենք տւել յամառաբար երկար ամիաների ընթացքում եւ որին մենք դիմում ենք մեր կամքին հակասակ, զգալով, թէ որքսն դատապարտելի է ներկայ ճգնաժամում դրազեցնել հայ հասարակութիւնը. այդպիսի անհամուր հարցերով։

ՀԱՄԵՐԱԾԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՓՈՐ

Սիացեալ նահանգների Ֆօլ-Բիվը քաղաքի Հընչակեան մասնաճիւղը և Դաշնակցական կօմիտէն կայացրել են իրենց մէջ համաձայնութիւն համերաշխ գործութեան համար։

Մեզ ուղարկուած է այդ երկու մարմինների խառը ժողովի արձանագրութիւնը, կնքուած և ստորագրուած երկու կողմից էլ։

Թողնելով համաձայնութեան այլ և այլ կէտերը, որոնք բոլորովին տեղական նշանակութիւն ունեն, հասարակութեան ուշադրութիւնն ենք դարձնում արձանագրութեան հետեւեալ կէտի վրայ։ Խառը ժողովի առաջին խնդիրը եղել է քննել թէ բանակցողներից իւրաքանչիւրն իրաւունք ունի արդեօք անկախօրէն բանակցութիւնները տանել։

„Դաշնակցականը թէ իրենց ժրագրի եւ թէ իրենց Ամերիկայի պատգ. ժողովի արձանագրութենէն վկայութիւն բերելով ապացուցին թէ իրաւունք ունին--իսկ չնչակեանը անկարող լինելով ցուցնելու համար նման օրինակ մի որ եւ է պաշտօնական զրութիւն որոշնեցաւ, որ երկուստէք փոխառաջարձաբար-ապահովագրեք փոխանակեն, որպէսզի մի որ եւ է ար տ արք ն մ' ի ջ ա մ' տ ո ւ թ ի ւ ն է ա թ ո դ չ ը ս ե լ ա յ և ա լ տ ե լ ե ր կ ու կ ո ղ վ ա ն է վաւերացուած եւ կնքուած վժինները։“

Արձանագրելով համերաշխ գործունէութեան այս փորձը, յայտնում ենք, որ Ֆօլ-Բիվը մեր կօմիտէն, հետեւելով զանազան ժամանակներ զանազան տեղերում մեր միւս կօմիտէնների արած քայլերին, վարել է „Դաշնակցութեան“ Ծրագրի ոգու համեմատ։

Աւելորդ չենք համարում յիշեցնել հայ հասարակութեան „Դրօշակի“ առաջին տարւայ առաջին համարի (1891 թ. մայիս) մէջ լոյս տեսած յայտարարութիւնը՝ հաստատելու համար Ֆօլ-Բիվը, ինչպէս և մեր միւս կօմիտէնների արած քայլերը։

„Վերեւ մենք բնրէնք համառու ծեւով այն գանազանութիւնը զոյլիւն ունեցող օրգաններից, որ ստիպում է մեզ երեւան զալ մի նոր օրգանով սակայն որչափ եւ զ ա ն ա զ ա ն ո ւ ե ն ը ուղղութեամբ նրանցից, այնուամենայնիւ մենք ուզում ենք նրանց հետ ընկերական յարաբերութեան մէջ լինել որովհետեւ բոլոս էլ կը ուզում ենք մի ընդհանուր թշնամու դէմ։“

ՆԻՒՐԱՑԼՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Ուռսաստանի Կ. Բ. Քաղ. ստացւած են.

Առաջին թերթից 63 րուբլի 10 կոպէկ, № 1 ստորագրութիւնից 50 ր., № 120 ր., № 2 ստորագրութիւնից 14 ր., Մեր խմբից Գ. Ե. 25 ր., Յ. Պ. 10 ր., Մարս 50 ր., Վ. Վ. 3 ր.

Աշհագնի միջոցաւ Ուռսաստանի Խ. Քաղ. գլերձէն 5 րուբլի։

Քրանս. Կ. Քաղաքից ստացւած են.

Տիգրիս 20 ֆր., Արգոս 10 ֆր., Արպեր 4 ֆր., Ապրդապետ 5 ֆր., Տիգաձէք 6 ֆր., Եփրատ 3 ֆր., Ասրկաւագ 2 ֆր., Տրդատ 2 ֆր.

Նոյն տեղից Աշոտ 2 ֆր., Ակն 2 ֆր.

Նիւե-Եօրքէն՝ Յ. Ա-էն 1 դոլ.

Վիշապ քաղ. կեդ. կօմիտէի մնդուկի մէջ ստացւած են.

Սարգսեան 20 օսմ. ոսկի, Հուր 20 օսմ. ոսկի, Գ. 100 ֆր., Կամաւոր 300 դրամ, Թոփէք 60 դր., Տար-

գանեան խմբի անդամ օր. Զոհ 20 դր., Սեխ. Եղիա
20 դր., Նոյնը 5 դր., Արէս 20 դր., Կախաղան 18 դր.,
Գեղասար 10 դր., Միւթիւն և. 15 դր., Սէր իւ. 10 դր.
Նոյն տեղից ստացւած են (15 յունիս-12 օգոս-
տոս 96 թ.):

Աար 200 օսմ. ոսկ, Մարգիս 200 օսմ. ոսկի, Խաչ.
Գառ 100 օսմ. ոսկի, Յուսացողք 1000 ֆրանկ, Լամ-
բա 20 օսմ. ոսկի, Կավճիէլ 20 օսմ. ոսկի, Թոփ մէկ
20 օսմ. ոսկի, Ախտէլ 11 օսմ. ոսկի, Չիֆլ 5 օսմ.
ոկի, Անայիս 3 օսմ. ոսկի, Վարդապետ 154 դահեկան:
Քօլդ. Սիլիստը քաղաքից ստացւած է.

Սլաք 20 ֆր., Մարտիրոս 20 ֆր., Ա. Մինասեան
10 ֆր., Հայրենասէր 10 ֆր., Լևոն Մ. Թօփսաքալեան
10 ֆր., Զաքար 10 լէվ, Թագւոր 6 լէվ, Օ. Ս. Փա-
փազեան 6 լէվ, Ալեքսան Օ. Մէրտումնան 5 լէվ,
Մկրտիչ Լալեեան 5 լէվ, Ռումբ 5 լէվ, Ա. Հաճի Գրի-
գորեան 5 լէվ, Գ. Ս. Չափուքչեան 2 լէվ։ Գրիգոր
Սիմոնեան 2 լէվ, Յակոբ Յարութիւնեան 2 լէվ, Պատա-
նիկ 40 ֆր., Արժան 2 լէվ.

Տապար քաղաքի կեր. սնդուկի մէջ ստացւած են.

Արանտեր գիւղից Տ. Նազլու 5 բուրգի, Տ. Զանակ
լ ր, Խ. Գ. 1 ր., Հաճի-Պապ 45 կոպէկ, Կին մը 4
կոպ.

2էիւ գիւղից Տ. Պայծառ 1 ր., Յ. Պ. 5 ր., Ա. Զ.
11 ր., Կ. Զ. 10 ր., Ա. Զ. 2 ր., Գ. Գ. 5 ր., Խ. Ա.
5 ր., Մ. Ա. 15 ր., Յ. Ա. 5 ր., Ծ. Ա. 10 ր., Մ. Հ.
8 ր., Տ. Անսա 1 ր., Ա. Ք. Վ. 5 ր., Կ. Ք. 1 ր.,

Ապառաժ գիւղից Ա. Ա. 2 ր., զ. Ա. 5 ր., Ց. Ա.
10 ր.—Լեղիջուր գիւղից Ց. Տ. 15 ր.

Վառնայի կօմիտէի արկղը մտած է թատերական
ներկայացումներուն համապատասխան 481 էլլ 20 ս.

Հոգեկառք 25 լէվ, Էվելինա 4 լէվ, Թամար 5 լէվ
Արագիլ 2 լէվ, Կիր 1 լէվ, Հայկակ Խ. 6 լէվ 25 ս.,
Եփրատ Խ. 10 և 9 լէվ, Քաջունիք Խ. 5 լէվ, Ալիս
Խ. 5 լէվ, Աշխէն Խ. 8 լէվ 60 ս., Փայլածու Խ. 4
լէվ, Աստղիկ Խ. 8 լէվ 50 ս., Ակերպալոյս Խ. 5 լէվ,
Խիզան Խ. 6 լէվ, Ն. Ղ. 2 լէվ Օր. Գոհար 1 ֆրանս.
ուկին:

2որ իւ. 14 լէվ, Գեղամ իւ. 8 լէվ, Կրակ իւ. 4 լէվ,
Օվան 10 լէվ, Մահթիկ 2 լէվ, Մարօ իւ. 2 լէվ,—
Թռիչ Խումբէն՝ 8. Յ., Ա. Ա. 2-ական լէվ, Ա. Մ. 1
լէվ, Ա. Յ. Ա. 6 լէվ, Կ. Մ. Ա. 3 լէվ, Մ. Մ. 2 լէվ,
Առիւծ Ե. 3 լէվ, 1897-էն 10 լէվ 30 սանտ.

Ըստմայի մասնաճիւղի միջոցաւ Հրացան խ. 23 լէվ
80 ս., Ալարած խ. 9 լէվ, Ռումբ խ. 3 լէվ, Ռեժանակ
խ. 3 լէվ, Կայծ խ. 10 լէվ 85 ս., Ա. Բ. 2. Գեղցիէն
7 լէվ 75 ս., Ք. 1 լէվ, Մասնաճիւղին անդամներէն
44 լէվ, Մասնաճիւղին Գանձանակէն 65 լէվ 55 ս.
Ծումլայի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութենէն 25 լէվ:

Ի նպաստ Հարաւային-Ամերիկայ, Ղրկւած դաշնակցականներու Ամերիկ. 1.ինի Դաշնակցական կօմիտէի ձեռամբ հանգանակւած է.

Ա. Մ. 9 դլ., Վ. Ի. 6 դլ., Պ. Ս., Պ. Շ. 5-ական
դլ., Կ. Կ. 4 դլ., Պ. Ա., Տ. Ա., Ս. Ա., Ս. Փ., Ս. Խ. 3-ական
դլ., Մ. Ն., Յ. Ք., Յ. Հ., Լ. Բ., Գ. Վ., Կ. Ս., Մ. Ե.,
Ա. Ժ., Ա. Մ., Գ. Վ., Յ. Պ., Յ. Պ., Հ. Մ. 2-ական դլ., Բ.
Ս., Մ. Մ., Տ. Ա., Զ. Պ., Դ. Պ., Գ. Պ., Մ. Մ., Ա. Բ., Պ. Պ.,
Յ. Մ., Ա. Լ., Ա. Ա., Ն. Տ., Գ. Ա., Յ. Կ., Մ. Մ., Ա. Մ., Ա.
Ա., Կ. Ե., Վ. Կ., Գ. Պ., Բ. Կ., Ա. Ա., Ա. Ա., Ա. Մ., Ա. Խ.

Ա., Գ., Ա., Պ., Պ., Ղ; Ս., Տ., Պ., Տ., Է., Լ-ական ԴՀ;
Պ., Ի., Ա. Դ., Ց. Ա., Խ. Կ., Գ. Մ., Գ. Օ., Գ. Պ., Ց.
Կ., Ց. Է. 50-ական սանտ., Ց. Բ., Տ. Ց., Ամ, Շրջիք
25-ական սանտ.

Առևաճուկի կօմիտէի սնդ. մէջ ստացւած են.

Գաղտնապահ իս. 22 ֆր., Պանդուխտ իս. 28 ֆր.,
Նոր Աշխարհ իս. 25 ֆր., Արարատ իս. 15 ֆր., Մուրճ
իս. 6 ֆր., Թիւ 4152-60-ից 13 ֆր., Արուսեակ Տ-ից
2 ֆր., Պ. Ե-ից 2 ֆր.

Պուրկացի կօմիտէի սնդ. մէջ սաւացւած են.

Կամաւորական իս. 16 լէվ, կանանց իս. 58 լէվ 80
սանտ., Տարօնոյ իս. 61 լէվ 20 սանտ., Միւս աղջային-
ներէն 681 լէվ,

* * *

Ֆիլիպօվայօնի հայ կանանց ձեռքով կազմւած Դաշ-
նակցութեան Օժանդակ „Շաքէ“ կօմիտէի յունւար
ամսւայ մուտքը եղել 117 ֆր. 80 ս.

Աշուպուրականի կանանց և օրիորդներու խմբելու
նւիրատւութիւնները.

ԺԵՆԻԱՅԻ Խ. 75 ԴՀ., ԱՐԱՆՎԻԼԻ Խ. 23 ԴՀ., ԳՈՅՔԻ
Խ. 71 $\frac{1}{2}$ ԴՀ., ԴՈՀԱՐԻԿԻ Խ. 31 $\frac{1}{4}$ ԴՀ., ՄԱՅՐԱԿԻԼԻ Խ.
53 $\frac{1}{2}$ ԴՀ., ՀԱՅԿՈՒՆԻ Խ. 68 $\frac{1}{2}$ ԴՀ., ԿԱՓԱԳԻԿԱԿԻ Խ.
20 ԴՀ., ՆԱՎՈՒՅԻԻ Խ. 19 ԴՀ., ԵՐԳԻՆԵՒԻ Խ. 36 ԴՀ.,
ԱՆԿԱԽ Խ. 38 ԴՀ., ԹԵՆԻԻ Խ. 26 ԴՀ., ՍԵԹԱՅԻ Խ. 19.
ԴՀ., ՍՕՆԱՅԻ Խ. 32 ԴՀ., ՔԱՋՈՒՇԻԻ Խ. 43 ԴՀ., ՎԱՐ-
ԱԵՆԻԿԻ Խ. 21 ԴՀ., ԶԻՆԱՐԻ Խ. 14 ԴՀ.

Աղջունում ենք հայ կանանց և օրիորդների զերմ
մասնակցութիւնը՝ Եղափոխական գործին:

四百一

Պոլիս՝ Խասգիւղ ընակող երկու պարսկահակառակ եղբայրներ՝ ԵՐԻԱՄՍԻ եւ ԱՌԱՄՇԵՎՈՒՀ ԹՈՒՂԼԱՃԵՄՆ, որոնք Օզոստոս 14-ին Խասգիւղի եկեղեցին խրկւած „Դաշնակցութեան“ աստրճանակներէն երկու հատ Սմիթ-Վիսարն իւրացուցած էին, մերժեցին վերադարձնել առոնք վառայի կօմիտէին, լրբարպ առարկելով՝ թէ ազգին ապրանքն են առոնք եւ ոչ ոք իրաւունք ունի ետ պահանջելու իրենցամբ։

Նոյն Երևանու Թուղթաճանը այդ տագնալի միջոցին վիճակա-
կանի մը հսկար „Դաշնակցութեան“ կողմէն իրեն յանձնուած երկու
օու. ուկին եւս կոկորդն անցուցած է, մէկ թժի՛ո միայն տալով
պատկաննալ տեսք: Այդ դրանու աւ կը միշտի այժմ՝ հատուցանելու,
այն առարկութեամբ՝ թէ վնաջին դէպքին հետեւանքով միծամնծ
լիսամսեր կը ած են, թէեւ շուայութեան հսկար դրամ: Ճի պակսիր
իրենց:

Այս ամենաալիրը արարքը հրապարակելով կը հրաւիրեմ հաս-
րակութիւնը իր զգւանքով և արհամաշհանքով հալածելու այլ ելք
կուքը եւ առող նևանները, որոնք չեն վսիժար սեփականելու ժողո-
վուէին՝ յանուն յեղակոխութեան իր արիւն-քրտինքով նւիրած լու-
մաներ:

Խմբագրութեանս դիմել Հետևեայ Հասցէով

Rédaction du Droschak, Genève (Suisse)